

Թեան մէջ անոր յաջողակութիւնը տեսնելով: Ոսկերչութեանն համբաւը շատ գերազանցեց իւր նախորդներունը: Եւ այնպէս մտերիմ էր թագաւորին՝ որ ամենածածուկ գաղտնեաց ալ կցորդըրած էր թագաւորը զինք՝ հաւատարմութեանը համար: 1754ին Սուլթանին մահուանէն ետեւ՝ Սուլթան Օսման Գ.ի ատեն՝ թէպէտ սեւ ամպեր իւր աստեղ նսեմանալու գուշակ կ'ըլլային, սակայն իւր ճարտարութեամբը շուտով փարատեցան այննշաններն: Երբ 1757ին Սուլթան Մուսթաֆա Գ. կը թագաւորէ՝ Միքայէլի առջեւ գործունէութեան նոր ասպարէզներ կը բացուին:

Որչափ Սուլթանին պաշտպան ձեռքը հովանի էր Միքայէլի վրայ, նոյնչափ ալ Պալթի անուն չարակամ Հրէին քսութիւններն ժամանակ մի կը սաստկանային, որոնց հետեւանքն ի սկզբան անգ ծանրացան Միքայէլի վրայ, բայց, ինչպէս ըսինք, շատ կարճ ժամանակի համար: Հրեայն իւր քսութիւններն այնչափ կը սաստկացընէր, որ Միքայէլ ստիպուեցաւ առ ժամանակ մի արքունեաց հրաժեշտ տալ, Վալթա փոխադրուիլ եւ արդի Սէդէի խմբին մէջ իւր արուեստը շարունակել: Բայց կրցաւ Հրեայն իւր երազած յաջողակութեան պտուղներն վայելել ...: Սուլթան Մուսթաֆա քաջ տեղեակ ըլլալով Միքայէլի թշնամեացը նախանձուն՝ իւր գանձէն ականաւոր միագլուխ կամար մը հանել կու տայ, եւ կը հրամայէ Հրէին՝ որ երկգլխեան ընէ զայն՝ յար եւ նման առաջին գլխուն: Հրեայն կը ճգնի, կը տառապի, կը յուսահատի. յերեւան կ'ելէ